

**1.2.2. Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2004թ. հունվար-սեպտեմբերին, ընթացիկ գներով, բոլոր համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7638 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 331.0 մլրդ. դրամ, որը 2003թ. մակարդակը գերազանցել է 17.2%-ով: 2004թ. սեպտեմբերի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է. օգոստոսի 118.5%-ը:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ ուղղությունների ունի հետևյալ պատկերը՝ բուսաբուծության համախառն արտադրանքը կազմում է 189.4 մլրդ. դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 25.6%-ով, իսկ անասնաբուծության համախառն արտադրանքը կազմում է 141.6 մլրդ. դրամ, որը գերազանցում է նախորդ տարվա մակարդակը 7.5 %-ով:

Բուսաբուծության համախառն արտադրանքի աճը պայմանավորված է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի, կարտոֆիլի, խաղողի ու կերային մշակաբույսերի համախառն բերքի ծավալների ավելացմամբ: Մասնավորապես հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքն ավելացել է 152.8 հազ. տոննայով կամ 56.0%-ով, կարտոֆիլինը՝ 100.4 հազ. տոննայով կամ 37.2 %-ով, խաղողինը՝ 22.6 հազ. տոննայով կամ 57.5%-ով, կերային մշակաբույսերինը (կուտակված խոտինը)՝ 237.4 հազ. տոննայով կամ 34.5 %-ով:

**Անասնաբուծական մթերքի արտադրությունը հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2004թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ**

*(հաշվարկային տվյալներ)*

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) <sup>1</sup> , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %	2004թ.	2004թ. 2003թ. նկատմամբ, %
ք.Երևան	0.3	100.0	3.4	113.3	34.3 <sup>♦</sup>	86.8
Արագածոտն	6.6	104.8	58.9	107.9	22.3	101.8
Արարատ	5.4	103.8	38.1	107.9	33.7	104.3
Արմավիր	6.8	100.0	33.0	108.2	32.2	105.2
Գեղարքունիք	9.6	104.3	90.8	108.2	33.0	105.1
Լոռի	6.1	103.4	60.2	108.7	24.3	129.3
Կոտայք	7.0	116.7	52.3	109.2	185.3	132.5
Շիրակ	8.4	103.7	76.3	108.4	30.7	104.4
Սյունիք	5.0	111.1	43.4	109.0	11.8	94.4
Վայոց ձոր	2.1	100.0	19.3	108.4	10.2	108.5
Տավուշ	4.6	104.5	35.0	108.0	16.5	104.4
<b>Ընդամենը ՀՀ</b>	<b>61.9</b>	<b>105.3</b>	<b>510.7</b>	<b>108.4</b>	<b>434.3</b>	<b>113.8</b>

2004թ. հունվար-սեպտեմբերին անասնի և թռչնի իրացումը գերազանցել է 2003թ. ցուցանիշը 3.1 հազ. տոննայով կամ 5.3 %-ով, կաթի արտադրությունը՝ 39.7 հազ. տոննայով կամ 8.4 %-ով, ձվինը՝ 52.8 մլն. հատով կամ 13.8 %-ով:

<sup>1</sup> Ներառյալ ներքին սպառումը:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2004թ. հունվար-սեպտեմբերին»

**Գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների կողմից արտադրված գյուղատնտեսական արտադրանքի ծավալներն, ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի**

	Կազմակերպությունների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Թողարկված գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, մլն. դրամ	2004թ. հունվար-սեպտեմբերը 2003թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ, %
Ընդամենը <i>այդ թվում՝</i>	86	1868	13511.7	123.2
մինչև 5 մարդ	37	115	135.3	41.4
6-50 մարդ	42	751	1827.9	151.9
51-100 մարդ	2	149	400.2	12.2
101 և ավելի	5	853	11148.3	181.1